Աբաս Խան՝ Շողակաթի մօտ Խանլղ այգին կը նուիրէ Յակոբ կաթողիկոսին (31)։ Իսկ կաթողիկոսը Սաղմոսավանքի գիւղին մէջ այգի մը կը գնէ 14 թուականի, և կը նուիրէ նոյն վանքին, Գաբրիէլ վարդապետի առաջնորդութեան օրով (32)։

1656ին Դաւրիժու կողմը, Դուխուրզան գիւղին մէջ, հետզհետէ կ'ընդարձակէ Աթոռապատկան այգին (33)։

1662ին, Օշական գիւղին մէջ, Իփրումենց Աստաքելի որդի՝ Պետրոսէն և Հեմինէն կը գնէ, չորսուկէս թուականի, վեց ջրաղացներ (34)։

1670ին Փարաքար գիւղին մէջ երկու այգիներ կը գնէ, և ուրիշ այգի մըն ալ իբրև բարեպաշտական նուէր կ'առնէ Պետրոսի որդի՝ Ղարագէոզէն։ Իսկ 1678ին Շուշաւեր գիւղին մէջ, Ջհանշիրի և Թահմազի որդիները մեծ այգի մը կը նուիրեն իրեն, թթենիի ծառերով (35)։

Էջմիածնի կալուածներն այսպէս ընդարձակելու ատեն, Յակոբ Ջուղայեցի կը ձեռնարկէ նաև ջրաբաշխական աշխատութիւններու։

---

(31) ԱՆդ 155-156։
(32) ԱՆդ 177։
(33) ԱՆդ 185։
(34) ԱՆդ 187։
(35) ԱՆդ 179, 184։